Քննարկվել և հավանության է արժանացել
ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
մանկավարժական խորհրդի
«26» 08 2024 թ. № 1 նիստում

Հաստատվել է՝
ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
Կոլեգիալ կառավարման խորհրդի «27» 08 2024 թ.
N 3-24 նիստում, խորհրդի նախագահ _____ Ս.Դավիդյան
/ստորագրություն/

ՀՀ ԿԳՄՍՆ «ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

1.ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ <<ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ>> ՊՈԱԿ-Ի ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

<<Չարենցավանի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Քոլեջ) կարևորում է հետազոտական գործունեությունը և այն համարում է նորարարություն իրականացնելու և ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական մտածողություն ձևավորելու միջոց:

Դասախոսների և ուսանողների իրականացրած հետազոտական աշխատանքները, մասնագիտական ոլորտի ազգային և միջազգային փորձի ուսումնասիրությունը հնարավորություն են ընձեռում արդյունավետ բարեփոխումներ իրականացնել և ժամանակակից աշխատաշուկային համապատասխան մասնագիտական հմտություններին ու կարողություններին տիրապետող քննադատական և ստեղծագործական մտածողությամբ օժտված պահանջարկ ունեցող մասնագետներ պատրաստել:

2.ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ/ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քոլեջում հետազոտությունները իրականացվում են վելուծական-ստեղծագործական աշխատանքների, ուսումնասիրությունների, փորձարարական աշխատանքների /ռեֆերատ, անհատական կամ խմբային ինքնուրույն աշխատանքներ, ստենդներ, պաստառներ և այլն/ ուղղություններով:

3.ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍԽԵՄԱ

Անհրաժեշտ ուղղություններով իրականացված հետազոտական աշխատանքները նպաստում են, որ քոլեջի միջին և նախնական/արհեստագործական/ կրթության մասնագիտությունների համապատասխան որակավորումների մասնագետների /արհեստավորների/ զբաղմունքները և մասնագիտական պարտականությունները բավարարեն պետական կրթական չափորոշիչների պահանջներին: Հետազոտական աշխատանքները իրականացվում են մոդուլի/առարկայի/ շրջանակում

հետազոտության կատարման և ներկայացման միջոցով և դրանք ներառվում են մոդուլի/առարկայի/ տեսական և գործնական պարապմունքներին հատկացված ժամերի մեջ: Հետազոտական աշխատանքը մասնագիտական ոլորտին առնչվող, կիրառական նշանակություն ունեցող և գործնական խնդիրների լուծմանը միտված ինքնուրույն անհատական կամ խմբային աշխատանքն է, որը պետք է անմիջականորեն առնչվի մոդուլի/առարկայի/ նպատակներին և խնդիրներին: Աշխատանքի արդյունքում ստացված տվյալները վերլուծվում են, քննարկվում և համապատասխան եզրակացություն է արվում: Հետազոտող ուսանողը ստանում է դասավանդող դասախոսի խորհրդատվությունը:

Հետազոտական աշխատանքը, ընդհանուր մեթոդաբանությունը և ընթացքը կատարվում է հետևյալ սխեմայի տեսքով՝

- թեմայի ընտրություն,
- նպատակների, ակնկալիքների և խնդիրների ձևակերպում,
- մեթոդաբանության մշակում,
- Աշխատանքի պլանավորում և բովանդակության ձևակերպում/ռեսուրսների պլանավորում հետազոտական աշխատանքի իրականացում (նյութերի հավաքում մշակում, էքսպերիմենտի իրականացում, արդյունքների վերլուծություն, մշակում),
- եզրակացություններ և առաջարկություն:

Հետազոտական աշխատանք իրականացնող ուսանողը կամ խումբը աշխատանքն իրականացնում է հետևյալ բաղադրիչների հաջորդականությամբ.

- Տիտղոսաթերթ/անվանաթերթ/
- Բովանդակություն/ցանկ/
- Ներածություն
- Հիմնական մաս
- Եզրակացություն
- Օգտագործված գրականության ցանկ

Հետազոտական աշխատանքը դասախոսին ներկայացվում է ձեռագիր, տպագիր կամ էլեկտրոնային եղանակով՝ դասախոսի հայեցողությամբ, նրա կողմից սահմանված ժամկետում՝ մինչև առարկայի/մոդուլի/ ավարտը: Հետազոտական աշխատանքին կից դասախոսը կարող է պահանջել ներկայացնել պրեզենտացիոն աշխատանք՝ սահիկաշարի կամ պաստառների ձևով:

Հետազոտական աշխատանքը գնահատվում է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների կատարման դեպքում:

4.ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԹԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Քոլեջի ռազմավարական նպատակներից է հետազոտական աշատանքների և հետազոտությունների որակի և արդյունավետության բարձրացումը: Նախատեսվում է բարելավել ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանները, զարգացնել և արդիականացնել քոլեջի ուսումնական լաբորատոր բազան:

5.ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԵՎ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԾՐԱԳՐԵՐԸ

Քոլեջն ունի միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում քոլեջի հետաքրքրություններն ու հավակնությունները: Դրանք ներկայացված են զարգացման ծրագրի ժամանակացույցում, որոնցից են նյութատեխնիկական բազայի բարեկարգումը և համալրումը, լսարանների, արհեստանոցների, լաբորատորիաների տեխնիկական հագեցվածության բարձրացումը, ուսումնամեթոդական և մանկավարժական հմտությունների կատարելագործումը, սոցիալական գործընկերության շրջանակի ընդլայնումն ու զարգացումը:

6.ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ԵՎ ԳՐԱԳՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Ակադեմիական ազնվության պահպանման և գրագողության կանխարգելման նպատակով քոլեջը մի քանի ուղղություններով հետևողական քայլեր է իրականացնում: Վերջիններս ներկայացված են քոլեջի ակադեմիական ազնվության կանոնակարգում: Քոլեջում մշակվել են կանխարգելման մի քանի քայլեր.

- պարբերաբար պետք է փոփոխվեն ուսումնական առաջադրանքներն ու աշխատանքների թեմաները՝ խրախուսելով հետազոտական աշխատանքերում ինքնուրույն հետազոտությունների կազմակերպումը,
- դասախոսները պետք է օգնեն ուսանողին ճիշտ պլանավորել հետազոտական աշխատանքի իրականացումը՝ միաժամանակ կանխելով գրագողության ցանկացած փորձ,
- ուսանողները պետք է պարբերաբար խորհրդակցեն հետազոտության ղեկավարի կամ դասախոսի հետ, ստանան ճիշտ խորհրդատվություն,
- հետազոտական աշխատանքում գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը գնատատվում է «անբավարար»:

7. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՓՈԽԿԱՊԱԿՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Քոլեջում իրականացվող հետազոտական աշխատանքները ընդգրկում են ինչպես տեսական, այնպես էլ պրակտիկ պարապմունքների շրջանակները: Պրակտիկաները նպաստում են ուսանողների կողմից մասնագիտական գործունեության վերլուծության, կարողությունների ու հմտությունների ձևավորման, ինչպես նաև մասնագիտական խնդիրների լուծման ճանապարհին ստեղծագործական մոտեցումներ ցուցաբերելուն: Պրակտիկաների ընթացքում, հետազոտելով արհեսավարժ մասնագետների փորձը, զարգանում է տեսական գիտելիքը գործնական կարողության վերածելու ունակություններ, ձևավորվում են ինքնակրթության և ինքնակատարելագործման կարողություններ: